




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4062



Գրականությունը բոլոր լեզուներին միացն է

№ 12 ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 12



ԾՐԱԳԻՐ

ԼԵՆԻՆԻԶՄԻ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԽՄԲԱԿԻ



3K7

Ճ-89

Հրատարակւորյուն Հ. Կ. ՅԵ. Մ. Կենսկովի
ՅԵՐԵՎԱՆ — 1924

370
1948-08

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեր միության առաջնակարգ խնդիրը հանդիսա-
նում է իր շարքերի Լենինյան դատարարակությունը:

Մեծ առաջնորդի անունով վերանվանված մեր կազ-
մակերպությունը, Վոչ թե միայն խոսքով, այլ նախ և ա-
ռաջ իր ելույթյամբ ու բովանդակությամբ պետք է լինի
Լենինյան:

Անհրաժեշտ է վոր մենք սովորենք լենինիզմը: ԿՅՆ-
Միության յուրաքանչյուր անդամ պետք է պարզ պատ-
կերացում ունենա այն մասին թե ինչպես էր աշխատում
ու պայքարում մեր մեծ ուսուցիչ, — ընկ. Լենինը:

Մենք ամեն կերպ պետք է աշխատենք յուրացնել
նրա առանձնահատկությունները, նրա աշխատանքի ու
պայքարի յեղանակը:

Կենսական այդ ուղղությամբ անհրաժեշտ գտավ
ըստ հնարավորին հրատարակել ժառանգելի բրույտներին հա-
տուկ սերիա, վորոնք նվիրված պետք է լինեն ընկ. Լե-
նինի կյանքին, գործունեության, նրա ուսմունքի հիմ-
նական կողմերին և այլն:

Սակայն պարզ է, վոր Լենինի ուսմունքը և նրա դա-
դարական հոյակապ կառուցվածքը մեր անդամների
սեպհականություն դարձնելու համար բավական չեմիայն
այդ գրքուկներն ոգտագործող անհատական աշխատանքը:
Այդ աշխատանքի հաջողություն համար անհրա-
ժեշտ է խմբակային միասնական հարատև աշխատանք և
նրան ուղղություն ցույց տվող վորոշ ծրագիր:

Միմիայն ծրագրված, խոր ու հարաաև ուսումնա-
սիրությունը հնարավորություն կտա մեր միության ան-

Յ Ե Ր Ե Վ Ա Ն
Յ Ե Կ Ս Ի Ս Ա Վ Յ Ի Ն Ս Պ Ա Ր Ա Ն
1924

գամին ստանալու լիակատար Լենինյան դատարանի-
թյուն:

Լենինի դմի ուսումնասիրության խմբակներն առաջ-
նակարգ անհրաժեշտություն են հանդիսանում մեր-
միության տեղական կազմակերպությունների համար:
Այդ խմբակների ղեկավարությունը պետք է ստանձնեն
տեղում աշխատող առավել լապեա ձեռնհաս ընկերները:
Ահա նրանց գործը դյուրացնելու նպատակով և լենի-
նի դմի ուսումնասիրությամբ զբաղվող յուրաքանչյուր ան-
գամին աջակցելու ցանկությամբ Կենտկոմն առաջարկում
է ներկա ծրագիրը:

Մենք հույս ունենք, վոր մեր միության անդամները և
Հայաստանի աշխատավոր յերիտասարդությունը ըստ հար-
կին կոգտագործեն ինչպես այս, նույնպես նաև բոլոր
մյուս մատչելի լեզվով շարադրված հրատարակությունները:

ՀԿՅԵՄ Կենտկոմ



1. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՐԱՆԻ ՄՈՑ

(2. Պարագափու. 6f)

Խորհրդային իշխանությունը, վորպես պրոլետարիա-
տի ղեկավարութիւնը Է: Բանվորների և գյուղացիների
միությունը: Բանվոր դասակարգի քաղաքական հեգեմո-
նիան: Պրոլետարիատն ինչպես է հասել իշխանության:
Բոլշևիզմի գաղափարային հայացքների ամրապնդումը,
հեղափոխության մեջ բանվոր դասակարգի գերիշխանու-
թյան համար վարած ճակատամարտներում:

Նարոդնիկների հետ ունեցած առաջին ճակատամար-
տներն ինքնուրույն քաղաքականության համար և բան-
վոր դասակարգի դերը: Ինչ էլին հաստատում նարոդնիկ-
ները: Մարքսիստների առաջին քայլերը նարոդնիկների դեմ
վարած պայքարում: «Կապիտալիզմի վիճակը Ռուսաստա-
նում»: Լենինի առաջին անգամ ասպարեզ դուրս գալը:
Պայքար մարքսիզմի գաղափարային գերիշխանության
համար: Դասակարգ և ժողովուրդ: Դյուղացիության տա-
րերային սոցիալիստականության հարցը: Անհատական
տեքորը թե մասսայական շարժում: Նարոդնիկական սո-
ցիալիզմի մանր-բուրժուական ելությունը: Նարոդնիկու-
թյան տատալումը: Կապիտալիզմի զարգացումը 90-ական
թվականներին: Գործադուլային շարժում:

Կապիտալիզմի զարգացումը, բուրժուական ինտելի-
գենցիայի դերը և լիզալ (որինական, ազատ համարվող)
մարքսիզմը: Լենինի մարքսումը լիզալ՝ մարքսիզմի դեմ:
Հեղափոխական թեորիայի և հեղափոխական գործնակա-
նության (պրակտիկայի) միացումը Վլադիմիր Իլյիչի մեջ:
«Բանվոր դասակարգի ազատագրության համար մղվող

պայքարի միութիւն»։ Բանվորական շարժման աճեցողութիւնը։ Առաջին համագումարը։

Տնտեսականութիւն (եկոնոմիզմ)։ Տարերայինը և գիտակցականը բանվորական շարժման մեջ։ Վերաբերմունքը դեպի քաղաքական կռիւլը։ Եկոնոմիստները վորպես պրոլետարիատի վրա ունեցած բուրժուական ազդեցութեան հաղորդիչներ։ Եկոնոմիզմը վորպես մեկնչիւմի նախորդ։ Զուգահեռազիծ տրեյդ-յունիքները և բարենորոգչական սինտիկատները ժամանակակից շարժման մեջ։

Լենինի պայքարը բանվոր դասակարգի ինքնուրույն քաղաքականութեան համար։ Եկոնոմիկա (տնտեսգիտութիւն) և քաղաքականութիւն։ Պայքար կուսակցութեան համար։ Լրագիրը վորպես հավաքական կազմակերպիչ։ Լենինի «Իսկրա» ն (մինչև յերկրորդ համագումարը)։ Թե ինչպե՞ս էր կոփվում բոլշևիզմը թշնամիների դեմ մղած պայքարում։

2. ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՅԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

(2 պարագմուճք)

(Բուլշևիզմի կազմակերպչական սկզբունքներ)

Ինչպե՞ս և կառուցվում մեր կուսակցութիւնը։ Կուսակցութեան 13-երորդ խորհրդաժողովի վորոշումները կուսակցական շինարարութեան մասին։ Պայքար ֆրակցիոնականութեան դեմ։ Դիսցիպլինան կուսակցութեան մեջ։ Բոլշևիզմի կազմակերպչական ավանդութիւնները։ Կուսակցութեան կանոնադրութիւնը։ Կուսակցութիւնը վորպես բանվոր դասակարգի ազդեցական դեկավար և առաջապահ (ավանգարդ)։

Հեղափոխական առաջապահի անելիքը։ Կռիւլ տարերայնութեան և խմբավորման առաջ խոնարհվելու դեմ։ Զուգահեռազիծ արեւմտայնութեան կոմկուսակցութեան

գրութեան հետ մինչեւ կոմիւնտերնի չորրորդ համաժողովը։ Պրոլետարիատը, կուսակցութիւնը, միջուկը, առաջնորդները։ Կուսակցութեան կազմակերպչական կառուցվածքը և կուսակցութեան կապն աշխատավորական լայն մասսաների հետ։

Կուսակցութեան յեկրորդ համագումարը, պայքար կանոնադրութեան առաջին կետի համար։ Մենշևիկները կազմակերպչական ուղարտունիզմը։ Մենշևիկների հետ ունեցած տարաձայնութիւնների սկիզբը։ Բլշևիզմի ցենտրալիզմը։ «Ինչ անել»։ Պրոֆեսիոնալ հեղափոխականներ։ Ինչպե՞ս էլին ընտրվում, կրթվում և կոփվում պրոֆեսիոնալ հեղափոխականները։ Ինչով և ուժեղ հին առաջապահը (հեղափոխականի կենցաղը, զաղտնագործութիւնը, իր կուլեկտիվին նվիրվելը, բանտ և աքսոր)։ Լենինը վորպե՞ս բանվոր դասակարգի մարմնացում։ 1905 թվականի հեղափոխութեան նախապատրաստութիւնը։

3. ՏԱԿՏԻԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(1905 թ. յետ ճիւղաճիւղի)

(2 պարագմուճք)

Հեղափոխական տրամադրութիւնների բարձրացումը բանվորական զանգվածներում (մասսաներում)։ Խմորումն զյուզացիների մեջ։ Բուրժուազիայի ընդլիմադրութիւնը։ Հեղափոխութեան գաղափարա-քաղաքական նախապատրաստութիւնը։ Յերեք — ազատամտական բուրժուական, մանր բուրժուական դեմոկրատական և պրոլետարական հեղափոխական (լենինյան) հոսանքների պայքարը։

Հոկտեմբերյան հեղափոխութեան հետևորդ պայքարի հիմնական հարցերի առաջադրումը սաղմային ձևով։ Տնտեսական գործադուլի աճումը քաղաքական Համընդհանուր գործադուլ և զինված հեղափոխութիւն։ «Յերկու տակտիկա»։ «Միապետական բուրժուազիայի

սյուշին կամ հեղափոխական պրոլետարիատի և գյուղացիության գլխին»։ Բոլշևիկները և մենշևիկները վերաբերմունքը դեպի ազատամիտ բուրժուազիան։ Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դիկտատուրայի լուսնագր, բանվորների և գյուղացիների ալիմյան միության սահմանափակումը։

Խորհուրդների տարեբաշխորեն ծագումը։ Պրետերի Խորհրդի հեղափոխական պրակտիկան (գործնականություն)։ Պետք է արդյոք «լուծել», թե՞ «կազմակերպել» հեղափոխությունը։ Դեկտեմբերյան ապստամբությունը։ Առաջին Դումայի բոյկոտը։ Յերկրորդի ընտրությունները։ Պայքարի ձևերի փոփոխություն։

1905 թվականի հեղափոխության աված դասերը։ Գյուղացիությունը զննց արդյոք բանվոր դասակարգի հետեւից։ Բանվորների և գյուղացիների միությունը, բանվոր դասակարգի և նրա կուսակցության դեկամբրություն տակ։ Ինչպես ձեռք առնել իշխանությունը։ «Ապստամբանապաշտ միմիտություն»։ Հիմնադիր ժողովի լուսնագր և խորհուրդները։ 1905 թվականի հեղափոխությունը, վորպես հոկտեմբերի ընդհանուր կրկնություն։

4. ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՆԱՀԱՆՋՈՒՄ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ

(2 պարագամու 65)

Կուսակցության նահանջը Բրեստի և Նեպի (նոր տրեստական քաղաքականության) ժամանակ։ Կուսակցությունն ինչպես եր շարժվում։ Բոլշևիկներն ինչպես սովորեցին նահանջել։

1905 թվականի հեղափոխության զսպումը։ Ռեակցիայի տարիները։ Տնտեսական ճգնաժամ։ Անգործություն։ Լոկաուտները, ինչպես Բուրժուազիայի նախկին ընդլիմադիր կուսակցություններն սկսում են սպասափորել ստոլնիպինականությանը։ Ինտելիգենցիայի հեռանալը հե-

ղափոխությունից։ Բան. շարժման մեջ աջ և ձախ թեքումներ։ Ինչպես ելին մենշևիկները նահանջում։ Լիկվիդատություն։ Դավադրություն բանվոր դասակարգի և հեղափոխության շահերի հանդեպ։ Լիկվիդատորներն ինչ ելին ասում կուսակցության անելիքների մասին։ Դեպի անլեզալ կազմակերպությունն ունեցած վերաբերմունքը։ «Ընդարձակ կուսակցություն» և բանվորական «համագումար»։ Ոտգովիզմ։ Բոլշևիկական միջուկի պայքարը թեքումների դեմ։ Լենինը կուսակցության անելիքների մասին։ Վերջացել եր արդյոք հեղափոխությունը։ Բոլշևիկներն ինչու ելին համոզված, վոր հեղափոխական շարժման նոր վերելքն անխուսափելի յե։ «Հարձակման ծրագրի մեջ նահանջ»։ Պետք է սովորել նահանջելը։ Անլեզալ կուսակցությունը։ Միջուկի ամրապնդումը։ Պայքարի լեզալ և անլեզալ ձևերի կոմբինացիա անելը։ Հարկավոր է արդյոք Դումա գնալ։ Ընկ. Լենինի պայքարը հեղափոխական ֆրոնտայի դեմ։ Կուսակցության ճկունությունը և նրա ամրախիմությունը (նպատակի միանմանություն)։ Կուսակցությունն ի մի հավաքելը և պահպանելը։ Դեպի համաձայնականությունն ու ընկ. Տրոցկու Վիեննայի «Պրավդան»։ Յեղած վերաբերմունքը։ փարիզի խորհրդաժողովը (1912 թվին)։ «Ոգոստոսյան ըլուկը»։ — Զուգահեռադիմ արևմուտքի կոմունիստական շարժման ժամանակակից դրություն հետ։ Արմիություններում և սպանովագրական զանձարկղներում կատարվող աշխատանքը։ Ինչ դեր է կատարել այդ աշխատանքը։

Բանվորական շարժման կենդանացումը։ Լենայի դրահակահարությունները։ «Զվեզդայի» և «Պրավդայի» դարաշրջանը։ Կուսակցությունը շարժման գլուխ կանգնած։ Բոլշևիկներն ինչպես ելին հարձակվում և ինչպես Վանեցին մենշևիկներին։

5. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԲԱՂԱԲԱՅԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԱՆՑՆԵԼԸ

(1 պարագրաֆ)

Համաշխարհային պատերազմը Այդ պատերազմը հարուցող տնտեսական պատճառները: Այդ ժամանակաշրջանի բնութագրվածումն ընկ. Լենինի կողմից: Ինպերյալիզմը ընկ. Լենինի բնորոշմամբ Գաղութային խնդիրը: Սոցյալ-հայրենասիրություն: Ոպորտունիզմի սոցիալական արմատները:

Մենշևիկները վորպես պաշտպանողական դիրք բռնողներ: Պայքար խաղաղության համար: «Վալերյոզ» թերթի դիրքը: Ընկեր Լենինի պայքարը նրանց դեմ: Ինչ և ինչպես եր սովորեցնում ընկ. Լենինը յերիտասարդական Միությանը պատերազմի ժամանակ: Պետք և արգելք զենք վերցնել: Պայքարը մանր-բուրժուական պացիֆիզմի (խաղաղասիրության) դեմ: Ինչ բան և պարտվողականությունը (пораженчество): Հոսանքի դեմ: Թե ինչպես եր բուլշևիկների փաբրիկ մի խմբակ մաքառում դավաճանողական II Ինտերնացիոնալի դեմ: Ընկ. Լենինն ինչպես եր համախոհներ ժողովում: Յիմմերվալդ: Յիմմերվալդյան ձախը: Ինտերնացիոնալի կազմակերպչական սազմը: Լենինը վորպես ձախի առաջնորդ: Վլ. Իլյիչը և Յերիտասարդական Ինտերնացիոնալը:

Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լողունգը: III Ինտերնացիոնալն ստեղծելու աշխատանքը: Իմպերալիզմի դեմ կռվող արեվելյան ազգային շարժումներին ոժանդակելու խնդիրը:

Պատերազմի տնտեսական հետեվանքները: Ուժասպառություն: Բանվորական ու գյուղացիական զանգվածներում և բանակում հեղափոխական տրամադրությունների բռնկումը: Փետրվարյան հեղափոխությունը, վորպես քաղաքացիական պատերազմի նախադուռ:

6. ՊԱՅԳԱՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

(3 պարագրաֆ)

Փետրվարյան հեղափոխության հիմնական հակասությունները: Զանգվածներն ինչ էյին սպասում հեղափոխությունից: Բուրժուազիան ինչպես եր կամենում մենշևիկներին և ես-երներին ձեռքով հեղափոխությունը հարմարեցնել խմբերալիստական պատերազմի շահերին: Մենշևիկները կապիտալիստների հետ կոալիցիա (դաշնակցություն) կազմած: Ժամանակավոր կառավարությունը և խորհուրդները: Յերկիշխանություն:

Լենինի առաջին անգամ ասպարեկ գալը — ապրիլ 4-ի թեզիսները: Խորհուրդները վորպես իշխանություն մի ձեվ: Դեպի ժամանակավոր կառավարություն ունեցած վերաբերմունքը: Պատերազմ պատերազմի դեմ: Հողն անհապաղ գյուղացիներին հանձնելը: Արտադրության վերահսկողություն: Ազգությունների ինքնորոշվելու, մինչև իսկ անջատվելու իրավունքը:

Թե ինչպես էյին մենշևիկներն ու ես-երները խաղախում խորհուրդները և նրանց դերը: Մասսաների (զանգվածների) մեջ անընդհատ աշխատելու բուլշևիկական գիծը և Խորհուրդներին ներքուստ նվաճելը: Կուսակցություն աճումը և կուսակցության ազդեցությունը զանգվածների (մասսաների) վրա: Հեղափոխության զինված ուժերի նախապատրաստություն — Բանվորների սպառազինում: Բուլշևիկական սաղմավորումն («Վոյենկա»): Հուլիսի 5-ը, Կորնիլովականություն: Ռեակցիայի ուժերի հարձակումը: Առաջնորդները թաղստոցում: Բուլշևիկների մասսաների հետ ունեցած կապի ուժեղացում: Խորհուրդներն ինչպես բուլշևիկյան դարձան: «Պրավդա»-ն խրամատներում: Գյուղացիական ընդվզումների աճումը: Վոչ — ուսու ազգությունների մանր բուրժուազիայի ընդիմադրական տրամադրությունը ժամանակավոր կառավար-

ընթացին ազգային քաղաքականության դեմ: Ինչու եր
Լենինը պահանջում, վոր բոլշևիկները հեռանան դեմոկրա-
տական խորհրդակցությունից և վճռական անառակելի
հարձակման անցնեն: Իշխանության համար վարած պայ-
քարի ռազմարվեստ (ստրատեգիա): Լենինն ապստամբու-
թյան արվեստի մասին: Լենինն իշխանության համար մը-
ղած պայքարում յերիտասարկության խաղացած դերի
մասին: „Տասն ու, վոր աշխարհը դրդացրեց“: Ինչու
առաջին պրոլետարական հեղափոխությունը տեղի ունե-
ցավ Ռուսաստանում:

Վ. Ի. Լենինի ուսմունքը պետության և հեղափո-
խության մասին: Պրոլետարիատի գլխատուրայի թեո-
րիան: Խորհրդային պետությունը: Սահմանադրություն:
Ժողկոմխորհի առաջին քայլերը:

Տեղական իշխանություններ: Ռազմական խնդիրներ:
Պայքար խաղաղության համար: Բրեստի նահանջը: Կա-
ռոն և արդյոք բոլշևիկը կոմպրոմիսի համաձայնվել: Կո-
սակցության VII համագումարը: Պայքար ձախ թեքման
դեմ: Քաղաքացիական պատերազմ: Կարմիր Բանակի կա-
ռուցվածքը: Բանվորների և գյուղացիների ռազմա-քաղա-
քական միությունն իշխանությունը ղաշապանելու
գործում:

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԺԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

(2 պարագամուհ)

Ռազմական կոմունիզմի տնտեսական քաղաքակա-
նությունը: Նրա անհրաժեշտությունը քաղաքացիական
կռվի հանգամանքների ժոնի վրա: Քաղաքականությունը
գյուղում: Ռազմական կոմունիզմ և կոսակցության կազ-
մակերպչական խնդիրները: VIII համագումարը „Սերեդ-
նյակի“ մասին, ազգային հարցի մասին: Դիսկուսիտ ար-
հմիությունների մասին: Ընկ. Լենինի դիրքն այդ գիսկուս-
ախայի ժամանակ: 1921 թվականի ճգնաժամը:

Կոսակցության համագումարը: Պարենագանձումից
պարենատուրքին անցնելը: Նեպ (նոր եկոնոմիական պոլի-
տիկա--նոր տնտեսական քաղաքականություն): Նահանջ
և արդյոք Նեպ-ը: Ինչու մացրինք Նեպ-ը: Լենինի դերը
Նեպ-ին անցնելու գործում: Ռուսաստանի տնտեսական
ձևերի վերլուծում (ըստ Լենինի): Նեպ-ը համաշխար-
հային հեղափոխության թափի դանդաղացման ֆոնում:
Յերկիրը կապիտալիստական ողակի մեջ, Գյուղացիու-
թյան հեռ քաղաքացիական պատերազմում ռազմա-քաղա-
քական միություն հաստատելուց, քաղաքական-տնտեսական
գործման անցնելը: Ինչ և պետական կապիտալիզմը: Հրա-
մանատարական բարձունքները վորպես պրոլետարիատի
գլխատուրայի հիմնական պայմանն: Նեպ ն ինչ և տը-
վել արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը: Կարո-
ղացա՞նք արդյոք գործում ստեղծել: Վ. Իլյիչի պատգամը բան-
վորա-գյուղացիական տեսությունը վերակազմելու մասին:
Հետագա անելիքները, ինչ ասաց 13-երորդ կոսակցական
խորհրդաժողովը տնտեսական քաղաքականության հեր-
թական խնդիրների մասին:

Զորը և ճնշված ազգությունները: Կոսակցությունը
և իշխանությունն ինչպես են լուծում ազգային հարցը:
ՍեչՄ, Արհմիությունների նոր անելիքները:

Նեպ-ի վտանգները: «Կոմունիստը պիտի առևտուր
անել սովորի»: Մանր-բուրժուական թրևում և թեքում-
ներ: Բանվորական ընդդիմադրություն: «Ռաբոչայա Պրավ-
դա»: «Բանվորական խմբակ»: Պայքար դրանց դեմ: Ինչ-
պես պետք և ապրի և աշխատի կոմունիստը Նեպ-ի պայ-
մաններում: Կոսակցական շինարարության անելիքները
նոր հանգամանքներում (13-րդ կոսակցական խորհրդա-
ժողովի վորոշումները): Կոսակցությունը և բանվորական
զանգվածները: Լենինյան կոչը: Մանր-բուրժուական կո-
սակցությունների անկումը և ինքնաքայքայումը:

8. ՀԱՄԱՅՆԱՐՅԱՅԻՆ ԲՈՒՅԵՎԻՁՄ

(2 պարագրաֆ)

Կուսակցության վերջնական նպատակը՝ Ռուսական հեղափոխության միջազգային նշանակությունը՝ ՌԿԿ-ը վորպես Կոմինտերնի սեկցիա (բաժանմունք)։ Կոմինտերնը վորպես իշխանության համար համաշխարհային պրոլետարիատի մղած պայքարի կազմակերպիչ և ղեկավար։ Ինչ Ինտերնացիոնալից ինչ բան սովորելու կոչ եր առնում ընկ. Լենինը։

Համաշխարհային մենշևիզմը։ II Ինտերնացիոնալը։ Ինչո՞ւ եր կայանում II Ինտերնացիոնալի դրական գերը։ Պրոլետարիատի կազմակերպումը, Լենինն ինչպես եր կանխատեսել II Ինտերնացիոնալի ուղղորտունիստական անկումն ու քայքայումը։ Բուրժուական միևնույնության մեջ մտնելու մասին յեղած վեճից մինչև «բանվորական» կառավարությունն Անգլիայում։ Ուժ շահերն ե պաշտպանում այդ կառավարությունը։ Կարո՞ղ ե արդյոք պրոլետարիատն իշխանության հասնել պարլամենտական ձայնավորությունների միջոցով։ Արհմիությունների Ամստերդամյան Ինտերնացիոնալը. ուժ վրա յե հենվում այդ Ինտերնացիոնալը։ Առաջնորդներն ու մասնակիցները II Ինտերնացիոնալում։ II Ինտերնացիոնալը վորպես բուրժուազիայի և կապիտալիզմի նեցուկ։

Կոմինտերնը բուրժուազիայի և սոցիալ-դեմոկրատների գեմ մղվող պայքարում։ Լենինը վորպես Կոմինտերնի կազմակերպիչ։ Ինչպես եր Լենինը հրավեր կարգում Յիմմերվալդից անցնել III Ինտերնացիոնալին։ Արևմուտքի Կոմկուսակցության ձևավորումը։ Կոմինտերնի սեկցիաների կառուցվածքի կազմակերպչական սկզբունքները։ 21 պայմանական։ Դրանց տակտիկական նշանակությունը։ Պայքարը կենտրոնականության միացորդների գեմ։ Զուտ մնալ տարրերից և աջ առաջ-

նորդներից։ Կոմինտերնը վորպես միջազգային Կոմմունիստական կուսակցություն։

Պայքար ձախ թերությունների դեմ։ «Զախություն յերեխայական հիվանդությունները»։ Հարկավոր ե արդյոք գնալ պարլամենտ։ Հարկավոր ե արդյոք աշխատել ռեակցիոն Արհմիություններում։ Ինչպես եր վերացվում այդ թերությունները։

Կոմինտերնը պրոլետարիատի զանգվածների համար պայքարելիս։ Այդ պայքարի հաջողությունները։ Խմբակներից դեպի մասսաները։ Կոմունիստական շարժման զրույթունը և մասսաների հետ ունեցած կապը Գերմանիայում։ Զախ սոցիալ-դեմոկրատիայի դավաճանությունը։ 1923 թ. հոկտեմբերյան որերի դասերը։ ԿՅԵՄ-ը վորպես Կոմինտերնի զորամաս։ Պրոֆինտերն։

Աշխատանքը գյուղացիության մեջ։ Մենշևիկների վերաբերմունքը դեպի գյուղացիությունը։ Լենինյան Ինտերնացիոնալի վերաբերմունքը դեպի այդ աշխատանքը։ Բանվոր դասակարգի պայքարի միացումը գյուղացիական պատերազմի հետ։ Բուլղարական ապստամբության դասերը։ Գյուղացիական Ինտերնացիոնալը։ «Բանվոր-գյուղացիական կառավարության» լոգունքը։ Ինչո՞ւ եր բոլշևիկականություն գյուղացիները։

Բոլշևիզմն Արևելքում։ Ազգայնա-հեղափոխական շարժումը ճնշված գաղութներում։ II Ինտերնացիոնալի քաղաքականությունը։ Անգլիայի «բանվորական» կառավարությունը, վորպես բուրժուազիայի գաղութային քաղաքականության հաղորդիչ՝ գաղութային և կիսագաղութային յերկրներում։ Հեղափոխական շարժման աճումը Հնդկաստանում, Զինաստանում, Ֆեզիպոստում և այլն։ Կոմինտերնը վորպես այդ պայքարի ղեկավար։ Արդյունաբերական Արևմուտքի գողումը գաղութային Արևելքի հետ — Իլիչի պատգամները։

«Ազգային գրադարան»



NL0180874

Ամենորյա պայքարը ՆեՊ-ի հանդամանքներում և գեղի համաշխարհային հեղափոխությունը լուծած ընթացքը: Պատմական գծաչափեր: Ինչ և առում պատմությունը ժամկետների մասին: Կարելի՞ չե արդյոք հեղափոխություն առաջ բերել ուղած ժամանակ: Լենինյան Ինտերնացիոնալի անդամների անելիքները:

9. ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Լենինիզմի հիմնական հենակետները: Լենինը և Մարքսը: Իլլիչի գլխավոր պատգամները: Միություն կուսակցության մեջ: Ինչու և՛ Լենինը ՌՄԴԲԿ մեջ ֆրակցիա կազմել և կոչում եր ՌԿԿ մեջ ֆրակցիա կազմելու դեմ: Լենինյանների հերթական խնդիրները: Ինչպես դառնալ կուսակցական: Ինչ պետք է սովորել Իլլիչից: Իլլիչի բնութագիրը վորպես կուսակցության անդամի և առաջնորդի: Յեզրակացություններ:

